Տէր Խաչատուր այդ զի՞նչ արիր·
Դու մեր գլուխն ի՞նչ բան բերիր·
Մի թէ առ մեզ վասն ա՞յն եկիր,
Որ զմեր ժամերն խլել տայիր:
Է՞ր դու չար մարդկանց լսեցիր,
Նոցա խրատովն ի չուրջ եկիր·
Միշտ ըզնիկօլն դատ քաշէիր,
Եւ հազար դէշ նմա ասէիր:
Քեզ ի՞նչ պիտէր ի Լվով գալու,
Կամ թէ զնա կարգէն ձգելու·
Գիտէիր դու զնա չահելու,
Եւ զայս չար բանս չերկարելու: ...
Լաւ էր զմին չարն չահէիր,
Քան զմեզ զամէնքըս կորուսիր·
Ցեկեղեցեացըն զրկեցիր,
Զմեզ այլազգեաց ձեռք մատնեցիր:
Էջմիածինն այլ խատր արիր,
Քու մուրատիդ այլ չհասիր,
Զմեզ հոգւով մարմնով կորուսիր,
Մեծ փոթորակ թողիր զնացիր:

Նոյն իմաստով կը գրէ նաեւ Գրիգոր Դարանաղցի «Զոր պարտ էր հանճարեղաց հեղինակաց ըստ ժամանակին եւ ըստ տեղոյն եւ ըստ դիմացն խօսել զհնարական օրէնսն եւ փոքր չարին թոյլ տալով՝ զի մեծն խափանեսցի» (385):

## ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Խաչատուր Կեսարացի 1631ին մեկնեցաւ Լվովէն, Թողլով քաղաքը երկպառակութեան մէջ: Անիկա ունէր կաթողիկոսէն յանձնա–